Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԶԳ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Գրքի Փրոմանիան

ЛИССКАГО СОБРАНІЯ
БИБЛІОТЕКА

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՐԻՔԸ

Հրատ.
Ստեփանոսեանի եղբայրներ

1.

891.99
Р-89

Տպագրութիւն [illegible] Գ. [illegible]

6 NOV 2011

891.99
Թ-89
Ամ.

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ.

№ 8977

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ

1001
8791

Պոեմ

Հրատարակատիրոջ
ՍՏ. ԷՄՄԻՅԵԱՆՑ
Եւ ԸՆԿ.

ԹԻՖԼԻՍ 1904 Թ.
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Միք. փողոց № 81
(24)

2 3 .04. 2013
32394

Доз. ценз. Тифлисъ, 4-го марта 1904 года.

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՒԻԹԸ

I

Առիւծ-Մըհերը, զարմով դիւցազուն
Քառասուն տարի իշխում էր Սասուն.
Իշխում էր ահեղ, ու նըրա օրով
Հաւքն էլ չէր անցնում Սասմայ սարերով։
Սասմայ սարերից շատ ու շատ հեռու
Թընդում էր նըրա հրոչակն անարկու,
Խօսում էր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան էր—մի Առիւծ Մըհեր։

II

Էսպէս, ահաւոր առիւծի նըման,
Սասմայ սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի։ Քառասուն տարում
«Ա՜խ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.
Բայց հիմի, երբ որ եկաւ ծերացաւ,

Էն անահ սիրտը ներս սողաց մի ցաւ։
Սկըսաւ մըտածել գիւղացուն ծերը.
—Հասել են կեանքիս աշնան օրերը,
Շուտով սև հողին կերթամ ես գերի,
Կանցնի ծըխի պէս փառքը Մըհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ յարատեւ, և՛ ան,
Իմ անտէր ու որբ աշխարքի վըրա
Ոտի կը կանգնեն հազար քաջ ու գեւ...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման հետ
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք էր անում հըսկան ծերունի։

III

Մի օր էլ՝ էն գորշ յօնքերը կիտած
Երբ միտք էր անում, երկնքից յանկարծ
Մի հուր-հըրեղէն յայտնըւեց քաջին,
Ոտները ամպոտ կանգնեց առաջին։
—Ողջոյն մեծազօր Սասմայ հըսկային.
Քու ձայնը հասաւ Աստըծու գահին,
Ու շուտով Նա քեզ մի զաւակ կըտայ։
Բայց լաւ իմանաս, լեռներին ասքայ,
Որ օրը որ քեզ ժառանգ է տըւել,
Էն օր կը մեռնէք քու կինն էլ, դու էլ։
—Իր կամքը լինի, ասաւ Մըհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,
Մենք էլ նըրանով անմեռ կը մընանք։
Հըրեշտակն այստեղ ցոլացաւ նորից,
Ու էս երջանիկ աւետման օրից

Երբ ինքը ամիս, ինքը ժամն անցաւ,
Առիւծ-Մըհերը զաւակ ունեցաւ։
Դաւիթ անուանեց իրեն կորիւնին,
Կանչեց իր եղբայր Զէնով Օհանին,
Երկիրն ու որդին աւանդեց նըրան,
Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան։

IV

Էս դարում Մըսրը անյաղթ ու հըզօր
Մըսրա-Մելիքն էր նստած թագաւոր։
Հէնց որ իմացաւ՝ էլ Մըհեր չը կայ,
Վեր կացաւ կըռուով Սասունի վըրա։
Զէնով Օհանը ահից սարսափած՝
Թըշնամու առաջն ելաւ գըլխաբաց,
Աղաչանք արաւ, ընկաւ ոտները.
—Դու եղիր, ասաւ, մեր գըլխի տէրը,
Ու քու շըւաքում քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
Միայն մեր երկիր քարուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես։
—Չէ, ասաւ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անեմ,
Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դէմ։
Ու գընաց Օհան՝ բոլոր-բովանդակ
Սասունը բերաւ, քաշեց թըրի տակ.
Մենակ Դաւիթը, ինչ արին-չարին,
Մօտ չեկաւ դուշման Մելիքի թըրին։
Եկան քաշեցին՝ թէ զօրով տանեն,

Թափ տըւաւ, մարդկանց դէպ դէպ ու դէպ՝
Փոքրիկ ճրկոյթը մի քարի տակաւ,
Ապառաժ քարից կըրակ դուրս թըռաւ։
—Պէտք է սպանեմ էս փոքրիկ ծուռին,*)
Ասաւ Թագաւորն իրեն մեծերին։
—Թագաւոր, ասին, դու էսքան հըզօր,
Թըրիդ տակին է ողջ Սասունն էսօր.
Ի՞նչ պէտք է անի քեզ մի երեխայ,
Թէկուզ իր տեղով հէնց կըրակ դառնայ։
—Դուք գիտէք, ասաւ Մըսրայ Թագաւոր,
Բայց թէ իմ գլխին փորձանք գայ մի օր,
Էս օրը վրկայ,
Սըրանից կը գայ։

V

Էս որ պատահեց, մեր Դաւիթ հըսկան
Մի մանուկ էր գնա եօթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
Որ նըրա համար թէ մարդ,—թէ մըժեղ։
Բայց հընուց խօսք է, մեծ իմաստ ունի,
Թէ խաչը՝ տէրը զօրաւոր կանի։
Վայ անտէր որին աշխարքի վըրա,
Թէկուզ Առիւծի կորիւն լինի նա։
Զէնով Օհանին ունէր մի չար կին։
Մին-երկու լըռեց, մի օր էլ կարգին
Իրեն մարդու հետ սկըսաւ կըռուել.
—Ես մենակ հոգի, հազար ցաւի տէր,
Ի՞նչ ես ուրիշի եթիմը բերել,

*) Խնթ։

Նըստեցրել գլխիս պարապ հայակեր...
Հոգեմ գլուխը... ես գերի հօ չեմ՝
Ամենքի քէֆի եռեից թըռչեմ...
Մի կուռ կորցըրու, կարգիր մի բանի,
Գընա, իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսաւ ողբալ ու կոծել,
Իր օրը սըգալ, իր բախտն անիծել,
Թէ անբախտ եղաւ աշխարքի միջում,
Ոչ մի տէր ունի, ոչ մարդն է խըղճում..
Գընաց Օհանը երեխի տակ
Մի զոյգ ոտնաման բերաւ երկաթի,
Երկաթի մի կոռ*) շալակին գըրած,
Ու տրաւ Սասմայ քաղքի դառնարած։

VI

Քըշեց գառները մեր հովիւ հըսկան,
Եկաւ Սասունի սարերն անընման.
«Է՞յ ջան, սարեր,
Սասման սարեր»...
Որ կանչեց, նըրա ձէնից անաւոր
Դըղորդ-դըմբդըմբոցն ընկաւ սար ու ձոր,
Վայրի գազանները բընեերից փախան,
Քարէքար ընկան, դատարկուն եղան։
Դաւիթը ընկաւ նըրանց եռեից,
Որին մի սարից, որին մի ձորից—
Աղէս, նապաստակ, գայլ, եղնիկ բըռնեց,
Հաւաքեց, բերաւ, գառներին խառնեց,
Իրիկուան քըշեց ողջ Սասմայ քաղաք։

*) Մանակ

Կաղկանձ ու ոռնոց, աղմուկ, աղաղակ...
Քաղքացիք յանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հըրէս անհամար զաղան.

«Վա՜յ, հարա՜յ, փախէ՛ք...»
Մեծեր, երեխէք
Սըրտաճաք եղած,
Գոլծները թողած,

Որը տուն ընկաւ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ։
Դաւիթը եկաւ, կանգնեց մէյդանում.
—Վա՜հ, էս մարդիկը ի՞նչ վաղ են քընում.

Հէ՛յ ուլատէր, հէ՛յ գառնատէր,
Ելէ՛ք, շուտով բացէ՛ք դրռներ.
Ով մինն ունէր—տասն եմ բերել,
Ով տասն ունէր—քըսանն արել...
Շուտով ելէ՛ք, եկէ՛ք, տարէ՛ք,
Ձեր գառն ու ուլ գոմերն արէ՛ք։

Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըւեց քաղքի մէյդանում,
Գըլուխը դըրաւ մի քարի՝ մընաց
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ եկան միասին,
Գընացին Ձէնով Օհանին ասին.
—Տո՛ Ձէնով Օհան, տո՛ մահի տարած,
Էս խենթը բերիր, արիր գառնարած,
Ոչ գառն է ջոկում, ոչ գայլն ու ագէս,
Գազանով լցրեց մեր քաղաքն էսպէս.
Ասուած կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թէ չէ էս խալխին լեղաճաք կանի։

VII.

Եկաւ Օհանը, Դաւթի մօտ գընաց
—Հօրեղբայր Օհան, հեռո՛ւ եկ, կամաց,
Ուլեր կըփախչեն։—Մին էլ էնտեղից
Մի բոզ*) նապաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պրծաւ յանկարծ։
Դաւիթն էր. եկաւ, ետևից ընկած
Էն սարը քըշեց, ետ բերաւ էս ձոր,
Բերաւ, ուլերին խառնեց նորից նոր։
—Օ՜ֆ, ի՞նչ դըժար է, հօրեղբայր Օհան.
Ասուած օխնել է էն սև-սև ուլեր,
Ամա բոզալուկ էս ուլեր, որ կան,
Փախչում են, ցըրւում ողջ սարերն ի վեր.
Էնքան եմ երեկ վազել, չարչարւե՛լ,
Մինչև հաւաքել ու տուն եմ բերե՛լ...

Նայեց Օհանը, որ Դաւթի հագին
Ոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն է մաշւել, մինչ բուռն է հասել,
Մի օրւայ միջում էնքան է վազել։
—Դաւի՛թ ջան, ասաւ, չեմ թողնի էսպէս,
Բոզալուկ ուլեր չարչարում են քեզ.
Էգուց նախիրը կըտանես արօտ։

Ասաւ Օհանը ու միւս առաւօտ
Գընաց, նորից նոր մեր Դաւթի ոտի
Մի ջուխտ նոր տըրեխ բերաւ երկաթի,
Երկաթի մի կոռ հարիւր լըդրական
Ու շինեց Սասմայ քաղքի նախրապան։

*) Սպիտակաւուն։

VIII.

Քըշեց նախիրը մեր նախարարդ հըսկան,
Ելաւ Սասունի սարերն աննըման։
—«Է՜յ, ջան սարեր,
Սասման սարեր,
Ի՞նչ անուշ է
Ձեր լանջն ի վեր»...
Որ կանչեց, նըրա ձէնից ահաւոր
Դղորդ—դըմբդըմբոցն ընկաւ սար ու ձոր։
Վայրի գազաններ բընեբից փախան,
Քարէքար ընկան, դառարկուն եղան։
Դաւիթն էր. ընկաւ նրանց հաւեից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Գայլ, ինձ, առիւծ, արջ, վագրը բըռնեց,
Հաւաքեց, բերաւ, իր նախրին խառնեց
Ու առաջն արաւ դէպ Սասմայ քաղաք։
Ոնոց, մըռընչիւն, աղմուկ, աղաղակ...
Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՞նչ տեսան,
Հէնց քաղքի վըրայ անհամար գազան...
—«Վա՜յ, հարա՜յ, փախէ՛ք...»
Մեծեր, երեխէք
Սըրտաճաք եղած,
Դուրսնները թողած
Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ։
Դաւիթը եկաւ կանգնեց մէյդանում.
—Վա՜հ, էս քաղքըցիք ի՞նչ վաղ են քընում։
Հէ՛յ կովատէր, հէ՛յ գոմշատէր,

Ելէք, շուտով բացէք դըռներ,
Ով մինն ունէր—տասն եմ բերել,
Ով տասն ունէր—քըսանն արել։
Շուտով ելէք, եկէք, տարէք,
Ձեր եղն ու կով գոմերն արէք։
Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնաւեց քաղքի մէյդանում,
Գըլուխը դըրաւ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ եկան միասին,
Գընացին Ձէնով Օհանին ասին.
—Ամեն, քեզ ժատաղ, այ Օհան ախպէր,
Մեր եղն ու մեր կով թող մընան անտէր,
Միայն սրանից ազատ արա մեզ։
Ոչ արջն է ջոկում, ոչ գոմէշն ու եզ,
Մի օր էս քաղքին փոքանք կըբերի,
Արջերոց կանի, կըտայ կաւերի։

IX.

Դաւիթ չըդառաւ, մի կըրակ դառաւ։
Ճարը կըտըրուած՝ Օհանը բերաւ
Նետ-աղեղ շինեց ու տըւաւ իրեն՝
Գընայ, որս անի սարերի վըրէն։
Դաւիթ նետ-աղեղն առաւ Օհանից,
Հեռացաւ Սասմայ քաղքի սահմանից
Ու դառաւ որսկան։ Գնաց, մի կորկուտ *)
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
Մըթանը գընում իրեն հոր ծանօթ

*) Կորեկի արտ։

Աղքատ, անորդի մի՞ծեր կընկայ մօտ,
Վիշապի նըման, երկար, ահագին
Մեկնըւում, քընում կըրակի կողքին։
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձաւ,
Պառաւը վըրէն սաստիկ բարկացաւ.
—Վայ Դաւիթ, ասաւ, մահըս տանի քեզ,
Դու պէտք է էն հոր զաւակը լինես։
Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին—
Ես եմ ու էն արան Աստծու տակին,
Ինչու ես գընում, տավում, տըրորում,
Իմ ամբողջ տարեան ապրուստը կըտրում։
Թէ որսկան ես դու—նեռ աղեղդ առ,
Ծըծմակայ գըլխից մինչև Սեղանոտ
Քու հէրը ձեռին մի աշխարհ ունէր,
Որսով մէջը լի որսի սար ունէր.
Եղնիկ կայ էնտեղ, այծեամ ու պախրա.
Կարող ես—գընա, էնտեղ որս արա։
—Ի՞նչ ես, այ պառաւ, էլ ինձ անիծում.
Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում։
Ո՞ւրտեղ է հապա սարը մեր որսի...
—Գընա, հօրեղբայրդ—Օհանը կասի։

X.

Հօրեղբօր շէմքում միւս օրը ծէգին
Դաւիթը կանգնեց աղեղը ձեռքին։
—Հօրեղբայր Օհան, ինչու չես ասել՝
Իմ հէրը որսի սար է ունեցել,
Այծեամ կայ էնտեղ, եղջերու, կըխտար։
Վեր կաց, հօրեղբայր, տար ինձ որսատար

—Վայ, կանչեց Օհան, էդ քու խօսքը չէր,
Էդ ով քեզ ասաւ, լեղուն պատանձէր։
Էն սարը, որդի, գընաց մեր ձեռից,
Էն սարի որսն էլ գընաց էն սարից,
Էլ չկան այծեամ, եղջերու, կըխտար։
Քանի լուսեղէն քու հէրը դեռ կար,
(Է՜յ գիտի օրեր—որտեղ էք կորել,)
Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հէրը մեռաւ, Աստուած խըռովեց,
Մըսրայ թագաւոր զօրքեր ժողովեց,
Եկաւ, մեր երկիր քարուքանդ արաւ,
Էս սարի որսն էլ թալանեց, տարաւ.
Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալբաթ էսպէս էր գրած։
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըսրայ թագաւոր ձէնըդ կիմանայ...
—Մըսրայ թագաւոր ինձ ի՞նչ կանի որ...
Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրայ թագաւոր.
Մըսրայ թագաւոր թող Մըսրը կենայ,
Իմ հօր սարերում ի՞նչ գործ ունի նա...
Վեր կաց, հօրեղբայր, նեռ-աղեղդ առ,
Կապարճդ կապիր, գընանք որսատար։
Եկաւ Օհանը ճարը կըտրուած,
Գընացին տեսան՝ էլ ի՞նչ որսատար.
Անտառը ջարդած, պարիսպն աւերած,
Բուրգերը արած գետնին հաւասար...

XI.

Գիշերը հասաւ, մընացին էնտեղ։

Զէնով Օհանն էր, իր նետն ու աղեղ
Դրբաւ գլխի տակ, հանգիստ խրոմփաց.
Դաւիթը մընաց մրտքի ծովն ընկած։
Մին էլ նկատեց, որ մութը հեռւում
Մի թէժ, փայլփլուն կրբակ է վառւում։
Էն լուսը բրռնած՝
Վեր կացաւ, գընաց,
Գընաց ու գընաց, բարձրացաւ մի սար,
Բարձրացաւ, տեսաւ մի մեծ մարմար քար
Կիսից պատրուած,
Ու միջից վառւած
Բրխում է լուսը պռրզ, քուլա-քուլա,
Բարձրանում, իջնում ետ քարի վրրա։
Վար իջաւ Դաւիթ էնտեղից կրբկին,
Վար իջաւ, կանչեց Զէնով Օհանին։
—Ե՛լ, հօրեղբայր, քանի՞ քընես,
Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես։
Լուս է իջել բարձրը սարին,
Բարձրը սարին, մարմար քարին։
Ե՛լ, հօրեղբայր, անուշ քընից.
Էն ի՞նչ լուս է բրխում քարից։
Ելաւ, խաչ քաշեց Օհանն երեսին.
—Է՜յ, որդի, ասաւ, մեռնեմ իր լուսին,
Էն մեր Մարութայ սարն է զօրաւոր։
Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
Սասմայ ապաւէն, Սասմայ պահապան
Մեր սուրբ Տիրամօր վանքը Զարխափան։
Մշտական, երբ որ կրռիւ էր գընում,
Էնտեղ էր քու հէրն իր աղօթքն անում։
Քու հերը մեռաւ, Ասաւած խրռովեց,

Մրսրայ թագաւոր զօրքեր ժողովեց,
Մեր վանքն էլ եկաւ քանդեց էն սարում,
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դաւիթը էս էլ երբ որ իմացաւ,
—Անուշ հօրեղբայր, հօրեղբայր, ասաւ,
Որբ եմ ու անտէր աշխարքի վրրա,
Հէր չունեմ՝ դու ինձ հէրութիւն արա։
Էլ չեմ իջնի ես Մարութայ սարից,
Մինչև չշինեմ մեր վանքը նորից։
Քեզանից կուզեմ հինգհարիւր վարպետ,
Հինգհազար բանւոր մշակ նրրանց հետ,
Որ գան՝ էս շարաթ կանգնեն ու բանեն,
Առաջեան կարգով մեր վանքը շինեն։
Գընաց Օհանը ու բերաւ իր հետ
Հինգ հազար բանւոր, հինգհարիւր վարպետ։
Վարպետ ու բանւոր եկան կանգնեցին,
Զրրը՛խկ հա թրրը՛խկ, նորից շինեցին,
Առաջեան կարգով, փառքով փառաւոր
Բարձրը Մարութայ վանքը Տիրամօր։
Ցրրւած միարանք ետ նորից եկան,
Նորից թընդացին աղօթք, շարական.
Ու երբ շէն արաւ հօր վանքը նորից,
Ցած իջաւ Դաւիթ Մարութայ սարից։

XIII.

Հայրաւը տարան Մրսրայ Մելիքին.

—Հապտ չես ասիլ՝ Դաւիթը կըրկին
Հօր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարեան խարջը չես առել։
Մելիք զայրացաւ.
—Գընացէք, ասաւ,
Բաղին, Կողբաղին,
Սիւդին, Զարխաղին,
Սասմայ քար ու հող տակն ու վեր արէք,
Իմ օխտը տարեան խարաջը բերէք։
Քառասուն կոյս աղջիկ բերէք արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասունն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Իմ տանն ու դրան դարաւաշ *) դառնան։
Ու Կողբաղին առաւ զօրքեր.
—Գըլխիս վըրա, ասաւ, իմ տէր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը ջընջեմ Հայոց ազգի։
Ասաւ, Մըսրայ աղջիկ ու կին
Պար բռնեցին ու երգեցին.
—Մեր Կողբաղին գընաց Սասուն,
Կանայք բերի քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով ոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Գարնան շինենք եզ ու չորթան։
Ջան Կողբաղին, քաջ Կողբաղին,
Սասմայ Դաւթին զարկեց զեռին։

*) Աղախին։

Ու Կողբաղին փըքւած, ուռած,
—Շնորհակալ եմ, քոյրեր, գոռաց,
Մինչև գալըս դեռ համբերէք,
Էն ժամանակ պիտի պարէք...

XIV.

Էսպէս երգով,
Զօռով-զօրքով
Գոռ Կողբաղին մըտաւ Սասուն.
Օհան լըսեց՝ կապուեց լեզուն։
Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն ելաւ,
Խընդիրք արաւ.
—Ինչ որ կուզես՝ առ, տար, ամեն.
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Դառը դաղած դեղին ոսկին,
Միայն թէ գըթա մեր խեղճ ազգին,
Մի կոտորիր, մի տար մահու,
Վերև՝ Աստուած, ներքևը՝ դու...
Ասաւ, բերաւ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման։
Ու Կողբաղին կանգնեց, ջոկեց,
Մարագն արաւ, դուռը փակեց,
Քառասուն կոյս աղջիկ, սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրայ Մելիքին դարաւաշ դառնան։
Դէզ-դէզ կիտեց դեղին ոսկին.

1001/1678

Սև սուգ կալաւ Հայոց աղջին։

XV.

Հէյ, ուր ես, Դաւիթ, Հայոց պահապան, —
Քարը պատռուի—գնաս արի մէջդան։
Քանդած հօր վանքը որ շինեց նորից,
Ցած իջաւ Դաւիթ Մարութայ սարից,
Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտաւ,
Գընաց՝ պառաւի շաղգամը մըտաւ։
Պառաւն էր. եկաւ՝ անէծք, աղաղակ.
—Վա՛յ, խելօտ Դաւիթ, շաղգամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցաւ ուտես, ասաւ,
Քու աչքն աշխարքում մենակ ինձ տեսաւ.
Կորիկըս արիր գետնին հաւասար,
Էս էր մընացել ձըմեռուան պաշար,
Էս էլ կըտրում ես,
Էլ ոնց ապրեմ ես։
Թէ կըտրիճ ես դու, ադեղդ տու, գընա,
Քու հօր աշխարքին տիրութիւն արա,
Քու հօր գանձը կեր,
Թողել ես անտէր,
Մըսրայ Թագաւոր զըրկել է՝ տանի։
—Էլ ինչ ես վըրէս բարկանում, նանի.
Էդ ինչ ես ասում, ես չեմ հասկանում,
Մըսրայ Թագաւոր մեր ինչն է տանում։
—Մըսրայ Թագաւոր մեր ինչն է տանում...
Մըսրայ Թագաւոր քու աչքն է հանում,
Դանդալոշ Դաւիթ. զըրկել է հըրէն,
Եկել են Սասմայ քաղաքի վըրէն

Բաղին, Կողբաղին,
Սիւղին, Զարխաղին,
Թալան են տալի բովանդակ Սասում.
Քառասուն բեռ ոսկի խաբաջ են ուզում,
Քառասուն կոյս աղջիկ սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրայ Մելիքին զարաւաշ զառնան։
—Ի՞նչ ես, ա՛յ պառաւ, էլ ինձ անիծում.
Ցոյց տուր ինձ հապա—ո՞րտեղ են ուզում։
—Ո՞րտեղ են ուզում... Մահըս տանի քեզ.
Դու պէտք է էն հօր զաւակը լինես...
Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...
Ոսկին Կողբաղին ձեր տանն է չափում,
Աղջիկներ փըլեկ մարագն են լըցրած։
Շաղգամը թողեց Դաւիթ ու գընաց։
Տեսաւ՝ Կողբաղին իրենց տան միջին
Չափում է ոսկին թեղած առաջին,
Սիւղին, Զարխաղին պարկերն են բըռնել,
Զէնով Օհանն էլ շըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին։
Տեսաւ, աչքերը արնով լըցուցին։
—Վեր կաց, Կողբաղին, հեռու կանգնիր դու,
Իմ հօր ոսկին է—ես եմ չափելու։
—Կողբաղին ասաւ.—Է՛յ, Զէնով Օհան,
Կըտաս—տուր խաբջը էս օխտը տարեան,
Թէ չէ՝ կը գընամ, արևըս վըկայ,
Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը դայ,
Ձեր Սասմայ երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կը վարի, բոստան կը ցանի։

—Կորէք, անզգամ դուք Մըսրայ շըներ,
Բա չէ՞ք իմացել դուք Սասմայ ծըռեբ...
Մեռած էք կարծում դուք մեզ, թէ՞ շըւաք,
Կուզէք մեր երկիր գընէք խարջի տակ...
Բարկացաւ Դաւիթ, չափը շըպըրտեց,
Տըւաւ Կողբադնի գըլուխը ջարդեց,
Զափի փըշրանքը պատն անցաւ, գընաց,
Մինչև օրս էլ դեռ գընում է թըռած։
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան գընացին
Բաղին, Կողբադին,
Սիւդին, Զարխադին։

XVI

—Վա՛յ. վա՛յ, հօրեղբա՛յր, ի՞նչ ասեմ ես քեզ.
Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դէզ,
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի դըռան...
Հօրեղբայրն ասաւ.—Այ խենթ, խելագար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցը լինի աչքը մեզ վըրայ։
Զըրուիր, հիմի որ զօրք առնի՝ գայ,
Սասմայ քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դէմը կերթայ, ո՞վ կըռիւ կանի։
—Դու կա՛ց, հօրեղբա՛յր, թող գայ, ես կերթամ,
Կերթամ, ես նըրան պատասխան կըտամ։
Ու մութ մարագի դըռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց։
—Գընացէք, ասաւ, ազատ ապրեցէք,

Սասունցի Դաւթին արև խընդրեցէք։

XVII

Էսպէս ջարդուած, արիւնլըւայ
Փախան, ընկան հողը Մըսրայ
Բաղին, Կողբադին,
Սիւդին, Զարխադին։
Մըսրայ կանայք հեռից տեսան,
Հեռից տեսան, ուրախացան
Ու ծափ տըւին կըտերներին.
—Եկան, եկան, բերին, բերին...
Մեր Կողբադին գնաց Սասուն,
Կանայք բերաւ քառասուն-քառասուն,
Կարմիր կովեր բերաւ կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան...
Հէնց մտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Քըրքըջացին
Ու կանչեցին.
—Է՛յ, Կողբադին մեծարերան,
Էդ որտեղից լերան-լերան,
Լերան-լերան կրգաս փախած,
Հասա գըլուխըդ կիսից հըղած։
Էն դու չասիր՝ գընում Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր աւեր անեմ։
Գացիր Սասուն քանց դէլ գազան,
Ետ ես գալի քանց շուն վազան...

Ու Կողբադին խիստ բարկացաւ.
—Սուս կացէք դուք, լըրբեր, ասաւ.
Ձեր մարդիկն էք տեսել դուք դեռ,
Դուք չէք տեսել Սասմայ ծըռեր։
Սասմայ ծըռեր լերան-լերան,
Նեռեր ունեն մի-մի գերան.
Սասմայ երկիր քար ու կապան,
Դըժար սարեր, ձոր ու ծապան.
Ներանց խոտեր—ինչպէս կեռ թուր,
Ձօրք ջարդեցին երեք հարիւր...
Ասաւ ու էլ չառաւ դադար,
Վըռազ-վըռազ, գըլխապատառ
Վազեց իրեն Թագաւորին։
Խընդաց Թագաւորն իր աթոռին։
—Ապրես, ապրես, քաջ Կողբադին,
Արժէ՝ կախեմ ես քու ճըտին
Մեր զուզունի*) մեծ նըշանը—
Պարգև քու մեծ յաղթութեանը։
Ո՞ւր են, հապա առաջըս բեր
Սասմայ ոսկին ու աղջիկներ։
Ասաւ Մելիք, ու Կողբադին
Գըլուխ տըւաւ մինչև գետին.
—Ապրած կենաս, մեծ Թագաւոր,
Ձօռով փախայ ես ձիաւոր,
Ո՞նց բերէի Սասմայ ոսկին։
Մի խենթ ծընուեց Հայոց ազգին,
Ոչ ահ գիտի, ոչ տէր ու մեծ,
Գըլուխս էսպէս տըւաւ, ջարդեց.
«Ձեմ տալ, ասաւ, իմ հօր ոսկին,

*) Արժի։

Ձեմ տալ կանայքն իմ հայ ազգին,
Սասմայ երկիր ձեզ տեղ չըկայ...
Քու Թագաւոր, ասաւ, Թող գայ,
Թող գայ՝ ինձ հետ կըռիւ անի,
Թէ զոչաղ է՝ զօռով տանի»։
Կատաղեց, փըրփրեց Մըսրայ Թագաւոր.
—Կանչեցէք, ասաւ, իմ զօրքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
Հազար հազար մարդ անբեխ, անմօրուք,
Հազար հազար մարդ բեխը նոր ծըլած,
Հազար հազար մարդ նոր Թախտից ելած,
Հազար հազար մարդ Թուխ միրուքաւոր,
Հազար հազար մարդ սիպտակ ալեոր,
Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,
Հազար հազար մարդ, որ Թըմբուկ զարկեն...
Կանչեցէք, Թող գան, հագնեն զէնք, զըրահ,
Կըռիւ տի*) գընամ ես Դաւթի վըրա,
Սասունն աւերեմ,
Հեղեղեմ, ըներեմ։

XVIII.

Էսպէս անհամար զօրքեր հաւաքեց,
Եկաւ Սասմայ դաշտ, բանակը զարկեց
Ու ծանըր նըստեց Մըսրայ Թագաւոր։
Էնքան անագին բազմութիւնն էն օր
Բախմանայ ջըրին եկաւ ու չոքեց,
Ով եկաւ, խըմեց—գետը ցամաքեց,
Սասմայ քաղաքում մընացին ծարաւ։

*) Պիտի։

Ձէնով Օհանին զարմանքը տարաւ։
Քուրքը ուսն առաւ, սարը բարձրացաւ.
Սարը բարձրացաւ, տեսաւ, ինչ տեսաւ։
Ճերմակ վրանից դաշտը ճերմակել,
Ասես՝ էն գիշեր ձմեռը եկել,
Սպիտակ ձիւնով պատել էր Սասուն։
Լեղին ջուր կտրեց, կապ ընկաւ լեղուն,
Հարայ կանչելով՝ փախաւ, տուն ընկաւ.
—Վայ, փախէք, եկաւ... հայ, հարայ, եկաւ...
—Ի՞նչը, հօրեղբայր, ի՞նչը, ի՞նչն եկաւ...
—Ցաւն ու կըրակը Դաւիթի պինչն եկաւ։
Մըսրայ թագաւոր եղել է, եկել,
Եկել, մեր դաշտին բանակ է զարկել.
Թիւ կայ աստղերին, թիւ չկայ զօրքին...
Վայ մեր արևին, վայ մեր աշխարքին...
Ե՞կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք,
Ձոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցէ թէ գըթայ,
Մեզ սըրի չըտայ...
—Դու կաց, հօրեղբայր, դու դարդ մի անիր.
Գընա, քու օգում դու հանգիստ քընիր.
Հիմի ես կերնեմ, Սասայ դաշտ կերթամ,
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ։
Ու գընաց Դաւիթ ծանօթ պառաւին.
—Նանի ջան, ասա, ժանգոտած ու հին
Երկաթի կըտոր, անթարոց, շամփուր,
Ինչ ունես - չունես՝ հաւաքիր, ինձ տուր,
Մի էշ էլ գըտիր, որ վրէն նըստեմ,
Կրռիւ տի գընամ Մըսրայ զօրքի դէմ։
--Վայ, Դաւիթ, ասա, մահս տանի քեզ.

Դու պէտք է էն հօր զաւակը լինես...
Քու հէրն ունէր կրռւի համար
Հըրեղէն ձի, ոսկի քամար,
Զըրահ շապիկ, կապէն հագի,
Այ թեւին խաչ պատարագի,
Կուռ սաղաւարտ, Կայծակի-Թուր,
Իսկ դու կուզես էշ ու շամփուր...
—Ամէն, նանի, չեմ լըսել դեռ։
Ո՞ւր են հիմի իմ հօր զէնքեր։
—Հօրեղբօրըդ գընա հարցուր.
Ո՞ւր են, ասա, հանիր, բեր, տուր։
Բան է, թէ որ չըտայ սիրով,
Աչքը հանիր՝ խըլիր զօռով։

XIX.

Դաւիթ գընաց հօրեղբօր մօտ.
—Է՛յ հօրեղբայր, կանչեց հերսոտ,
Իմ հէրն ունէր կրռւի համար
Հըրեղէն ձի, ոսկի քամար,
Զրահ շապիկ, կապէն հագի,
Այ թեւին խաչ պատարագի,
Կուռ սաղաւարտ, Կայծակի-Թուր.
Կըտաս՝ բեր տուր...
—Վայ, Դաւիթ ջան,
Ահից գոռաց Ձէնով Օհան.
Քու հօր մահւան տարուց—օրից
Դուրս չեմ հանել ձին ախոռից,
Ոչ սընդուկից Թուր-Կայծակին,
Զըրահ շապիկ, ոսկի գոտին...

Ինձ թող, ամեն, մի սպանիր,
Կուզես—հրրէն, գընա հանիր։

XX.

Հազաւ Դաւիթ զէնքն ու զրրահ,
Կապեց գօտին, Թուր-Կայծակին,
Խաչն էլ իր յաղթ բազկի վրրա,
Ելաւ, հեծաւ Առիւծ հօր ձին,
Հօր ձին հեծաւ ու մըտրակեց.
Զէնով Օհան լալով երգեց.
—Ափսոս, հազար ափսոս հրրեղէն մեր ձին,
Ա՜խ, հրրեղէն մեր ձին.
Ափսոս, հազար ափսոս մեր ոսկի գօտին,
Ա՜խ, մեր ոսկի գօտին.
Ափսոս, թանկ կապէն, որ հագին տարաւ,
Ա՜խ, որ հագին տարաւ...

Դաւիթ բարկացաւ,
Ձին քշեց, դարձաւ,
Օհանը վախեց,
Իր երգը փոխեց.
«Ափսոս, նորելուկ Դաւիթըս կորաւ,
Ա՜խ, Դաւիթըս կորաւ։»
Էս որ իմացաւ,
Դաւիթ մեղմացաւ,
Իջաւ, Օհանի ձեռքը համբուրեց։
Զէնով Օհանն էլ, ինչպէս հայր ու մեծ,
Օրհնեց, խրրատեց նրրան հայրարար,
Դէպի Սասմայ դաշտ դրրաւ ճանապարհ։

XXI.

Սասունցի Դաւթին ունէր մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ ածգահա։
Սա էլ իմացաւ համբաւը կրռւի,
Մի բարդի ուսին գալիս է ահա։
Գալիս է՝ հեռւից բարձրը գոռալով.
—Ի՞նչ էք վէր եկել էս դաշտի միջում,
Քանի զըլխանի մարդիկ էք կամ ո՞վ,
Սասունցի Դաւթին որ չէք ճանաչում...
Բա չէ՞ք իմանում, որ էստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թեււոր.
Զըբեկցէք, հիմի ուր որ է՝ կըգայ,
Եկել եմ սըրրեմ մէյդանը էսօր։

Ասաւ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրրեց բանակից մի քըսան վրրան...
Դաւիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

—Ով քնած էք՝ արթուն կացէք,
Ով արթուն էք՝ ելէք, կեցէք,
Ով կեցել էք՝ զէնք կապեցէք,
Զէնք էք կապել՝ ձի թամբեցէք,
Ձի էք թամբել՝ ելէք. հեծէք.
Յետոյ չասէք՝, թէ մենք քընած—
Դաւիթ գող-գող եկաւ, գընաց...
Էսպէս կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կայծակ զարկի,

Մըսրայ զօրքի մէջ տեղ զարկեց,
Շողացնելով Թուր-Կայծակին։

Զարդեց, փշրեց մինչև կէսօր.
Կէսօր արին ելաւ հեղեղ,
Բըշեց, տարաւ հազարաւոր
Մարդ ու դիակ ողջ միատեղ։

Կար զօրքի մէջ մի ալեոր,
Աշխարք տեսած ու բանագէտ.
—Տըղէրք, ասաւ, ճամբայ տըւէք,
Գընամ խօսեմ ես Դաւթի հետ։

Գընաց՝ կանգնեց Դաւթի առաջ,
Էսպէս խօսեց էն ծերունին.
—Դալար կենա, կուռըդ, ով քաջ,
Սուրըդ կըտրուկ միշտ քու ձեռին։

Մի ծերունուս խօսքին մըտիկ,
Տես, քու խելքը ինչ է կըտրում։
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՞ր ես սըրանց դու կոտորում։

Այեն մինը մի մօր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընող աղքատ ու ծեր,
Որը լացով, քօղն երեսին
Նորապըսակ ջահիլ հարսին...

Թագաւորը զօռով-թըրով
Հաւաքել է, էստեղ բերել։
Խեղջ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել։

Թագաւորն է քու թըշնամին,
Կըռիւ ունես—իր հետ արա,
Հէ՞ր ես քաշում Թուր-Կայծակին
Էս անճարակ խալխի վըրա։

—Լաւ ես ասում դու, ծերունի՛,
Ասաւ Դաւիթն ալեորին,
Բայց թագաւորն ո՞ւր է հիմի,
Որ սև կապեմ նըրա օրին։

—Մեծ վըրանում քընած է նա,
Է՞ն, որ միջից ծուխը կելնի.
Էն ծուխն էլ հօ ծուխ չի որ կայ,
Գոլորշին է իր բերանի։

Ասին. դէպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դաւիթն իր ձին,
Բըշեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արաբներին.

—Ո՞ւր է, ասաւ, ինչ է կորել,
Դուրս կանչեցէք, գայ ասպարէզ,
Թէ մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ գըրողն եմ ես...

—Մելիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պէտք է քընի.

Երեք օրն է դեռ անցկացել,
Չորս օր էլ կայ, քունը առնի։

—Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լցրել ծոցը արիւնի,
Ինքը մրտել վրրանի մէջ՝
Օխտը օրով հանգիստ քընի՞...

Քընել-մընել չեմ հասկանում,
Վէր կացրէք շուտ, դուրս գայ մէյդան,
Էնպէս դրբան ես քընացնեմ,
Որ չը զարթնի էլ յաւիտեան։

Ելան՝ մարդիկ ճարահատուած
Շամփուր դրբին թէժ կրբակին
Ու զարկեցին խոր մրրափած
Մրսրա-Մելքի բաց կրընկին։

—Օ՞ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիծուած լրւի ձեռից,
Խոր մրոընչաց հրսկան հանդարտ
Ու շուռ եկաւ, քընեց նորից։

Ելան, բերին մեծ գութանի
Խոփը՝ դրբին թէժ կրբակին,
Ու կաս-կարմիր, կէծկրծալի,
Շիկնած տրւին մերկ թիկունքին։

—Օ՞ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիրաւ մոծակներից.
Աչքը բացաւ հրսկան հանդարտ,
Ուզում էր եա քընել նորից,

Տեսաւ՝ Դաւթին։ Գլուխն ահեղ
Վէր բարձրացրեց մրոընչալով,
Փրչեց վրրէն, որ թրոցրնի
Էն աժդրհին մի փրչելով։

Տեսաւ, տեղից ժամ չի դալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին։
Ալնոտ աչքերն ըսպառնալի
Յառեց խոժոռ Դաւթի աչքին։

Նայեց թէ չէ, զգաց՝ իր մէջ
Տասը գոմշի ուժ պակասեց։
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հեաը խօսեց.

—Բարով, Դաւիթ, յոգնած ես դեռ.
Ե՛կ, մի նստիր, խօսենք կարգին,
Յետոյ դարձեալ կրռիւ կանենք,
Եթէ կրռիւ կուզես կրրկին...

Իր վրրանում բրռնակալը
Քառասուն գաղ խոր հոր էր փորել,
Յանցով փակել մութ բերանը,
Վրրէն փափուկ խալի փրռել։

Ում որ յաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նրստեցնում էր իր վրրանում
Էն կորոտեան հորի վրրա։

Իջաւ Դաւիթ ձիուցը ցած,
Գընաց, նրստեց... ընկաւ հորը։

—Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց
Մըսրայ դաժան թագաւորը։

—Դէ՛, թող հիմի գընա՝ խաւար
Հորում փրթի, էնքան մընայ։
Ու ահագին մի ջաղացքար
Բերաւ, դըրաւ հորի վըրա։

XXII

Քընեց էն գիշեր Ջէնով Օհանը։
Գիշերն երազում երևաց ծերին՝
Մըսրայ երկընքում արև ճառագած,
Սև ամպ էր պատել Սասմայ սարերին։

Սասուիկ վախեցած վեր թըռաւ տեղից։
—Վա՛յ, կընի՛կ, ասաւ, մի ճըրագ արա՛,
Գընաց մեր անփորձ Դաւիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վըրա։

—Հողե՛մ գըլուխդ, ասաւ կընիկը,
Ո՞վ գիտի՝ Դաւիթն ուր է քէֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում։

Քընեց Օհանը։ Վերկացաւ դարձեալ.
—Կընի՛կ, Դաւիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրայ վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հիւանդ ցոլքում դալկացած։

—Ի՞նչ եղաւ քեզ, մարդ, գիշերուան կիսին.
Բարկացաւ վըրէն կընիկն աղմուկով։

Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Շուռ եկաւ, քընեց խըռոված հոգով։

Մի ուրիշ պատկեր աւելի ահեղ
Տեսաւ՝ երկընքի բարձրը կամարում
Վառուում էր Մըսրայ աստղը փառահեղ,
Սասմայ աստղիկը սուզուեց խաւարում։

Զարթնեց վախեցած։—Տունըդ քանդուի, կինն,
Ես ինչ լըսեցի քու էդ կարճ խելքին.
Կորաւ մեն մենակ մեր ջահիլն անտէր.
Վէր կաց, շուտ արա, ղէնքերըս մի բեր...

XXIII

Ելաւ Օհան, գոմը մըտաւ,
Զարկեց ճերմակ ձիու մէջքին.
—Է՜յ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասաւ,
Կըհասցընես Դաւթի կըռին։

«Մինչև լուս կըհասցնեմ».
Ու ձին տըրաւ փորը գետին.
—Մէջքդ կոտրի, լուսն ի՞նչ անեմ.
Լաշին հասնեմ ես թէ՞ նաշին։

Կարմիր ձիու մէջքին զարկեց.
Սա էլ երեսը փորը գետին։
—Չան կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ
Կըհասցընես Դաւթի կըռին։

«Մի ժամի մէջ, կարմիրն ասաւ,
Կըհասցընեմ Դաւթի կըռին»։

—Լեղի դառնայ, սև մահ ու ցաւ,
Ինչ տըւել եմ քեզ՝ էն դարին։

Հերթը եկաւ սևին հասաւ.
Գետին չերեւտ փորը սև ձին։
—Է՛յ, Ջան Սեւուկ, մինչ Ե՞ըր, ասաւ,
Կըհասցընես Դաւթի կըռւին։

«Եթէ ամուր մէջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մէկել ոտըդ շուռ տաս,
Կըհասցընեմ», ասաւ սև՝ ձին։

XXIV

Սև ձին քաշեց ձէնով Օհան,
Ձախը դըբաւ ասպանդակին,
Աչն էլ մինչև շուռ տար վըրան,
Կանգնեց Սասմայ սարի գըլխին։

Տեսաւ՝ Դաւթի նըժոյգն անտէր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքև Մըսրայ գօրքը չոքած,
Ինչպէս անծայր ծըփուն մի ծով։

Օխտը գոմշի կաշի հագաւ,
Որ չըպատռի իրեն զօռից,
Կանգնեց Օհան, ամպի նըման
Գոռաց Սասմայ սարի ծէրից։

—Հէյ-հէյ Դաւիթ, ո՞ւրտեղ ես դու.

Ցիշիր խաչը պատարագի,
Սուրբ Տիրամօր անունը տուր,
Լուսը դուրս եկ արեգակի։

Ձէնը գընաց, դըժդըժալով՝
Դաւթի ականջն ընկաւ հորում.
—Հայ-հայ, ասաւ, հօրեղբայրս է,
Սասմայ սարից ինձ է գոռում։

Ո՞վ Մարութայ Աստուածածին,
Ո՞վ անմահ խաչ պատարագի,
Ձեզ եմ կանչել,—հասէ՛ք Դաւթին...
Կանչեց, տեղից կանգնեց ոտքի,

Էնպէս զարկեց Ջաղացքարին՝
Քարը եղաւ հազար կըտոր,
Կըտորները երկինք թըռան,
Ու գնում են մինչև էսօր։

Ելաւ հորից, կանգնեց ահեղ։
Սարսափ կալաւ զև Մելիքին։
—Դաւիթ ախպէր, եկ գեռ էստեղ,
Սեղան նըստենք, խօսենք կարգին...

—Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շուտ, զէնքըդ առ, հեծիր քու ձին,
Դուրս եկ մէյդան, կըռիւ անենք։

—Կըռիւ անենք, ասաւ Մելիք,

Իմն է միայն զարկն առաջին։
—Քոնն է, զարկեր, կանչեց Դաւիթ
Գընաց, կեցաւ դաշտի միջին։

Եկաւ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբէքիր
Ու էնտեղից եկաւ կըրկին։

Երեք հազար լիպը էր քաշում
Հըսկայական իր մըկունդը.*)
Եկաւ, զարկեց. կորաւ փոշում
Ու երերաց երկրի գունդը։

Երկիր քանդուեց կամ ժաժք եղաւ
Ասին մարդիկ շատ աշխարքում։
—Չէ, ասացին, արնի ծարաւ
Հըսկաներն են իրար զարկում։

—Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,
Ասաւ Մելիք իրեն զօրքին։
—Կենդանի եմ, ամպի տակից
Գոռաց Դաւիթ Մըսրա-Մելքին։

—Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Տես, որտեղից հիմի կըգամ։
Ու վերկացաւ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծաւ երկրորդ անգամ։

---

*) Գուրզ.

Երկրորդ անգամ քըշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վերկացաւ, տեղ ու տարափ,
Աբար աշխարհ զողաց թափից։

Եկաւ, զարկեց. զարկի ձէնից
Մօտիկ մարդիկ ողջ խըլացան։
—Գընաց Դաւիթ Սասմայ տանից,
Գուժեց գոռող Մըսրայ արքան։

—Կենդանի եմ, կանչեց Դաւիթ,
Մին էլ արի—հերթն ինձ հասաւ։
—Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Կանչեց Մելիք ու վերկացաւ։

Երրորդ անգամ հեծաւ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրայ,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, եկաւ Դաւթի վըրա։

Եկաւ, զարկեց բոլոր ուժով,
Ծանրը զարկով հըսկայական.
Փոշին եկաւ Սասմայ դաշտից,
Բըռնեց երեսն արեգական։

Երեք գիշեր ու երեք օր
Փոշին կանգնեց ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բոթը տըւին Դաւթի մահուան։

Երբ որ անցաւ երեք օրը,
Էն ամպի պէս կանգնած փոշում

Կանգնեց Դաւիթ, ինչպէս սարը,
Գըրգուռ սարը մէգ-մըշուշում։

—Մելիք, ասաւ, ո՞ւմն է հերթը։
Սարսափ կալաւ գոռ Մելիքին,
Մահուան զողը ընկաւ սիրտը
Ու տապ արաւ գոռոզ հոգին։

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջաւ, մըտաւ վիհն էն խաւար,
Վերէն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար։

Մըռնչալով ելաւ տեղից
Էն առիւծի առիւծ որդին,
Իր ձին հեծաւ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին։

Առաջ վազեց մազերն արձակ
Մելքի պառաւ մայրը ջաղու.
—Դաւի՜թ, մազըս մա՛ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ինձ բաշխիր դու։

Երկրորդ անգամ թուրը քաշեց.
Էս անգամ էլ եկաւ քուրը.
—Դաւի՜թ, եթէ կուզես, կանչեց,
Իմ սըրտին զարկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասաւ,
Ելաւ Դաւիթ երրորդ անգամ.
—Էս մի զարկն ու Աստուած, ասաւ,
Էլ մարդ չըգայ, պէտք է որ տամ։

Ասաւ, ելաւ ու փոթորկեց,
Թըռաւ, ցոլաց Դաւթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջաւ Թուր-Կայծակին։

Անցաւ քառասուն գոմշի կաշին,
Անցաւ քառասուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրէշին,
Օխտը գազ էլ դէնը գընաց։

—Կենդանի՜ եմ, մին էլ արի՜,
Գոռաց Մելիք հորի տակից։
Դաւիթ լըսեց, շատ զարմացաւ
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...

—Մելի՜ք, ասաւ, թափ տուր մի քեզ։
Ու թափ տըւաւ Մելիքն իրեն,
Միջից եղաւ ճիշտ երկու կէս,
Մէկն ընկաւ դէսն ու միւսը դէն։

Էս որ տեսաւ Մըսրայ բանակ,
Ջուր կըտրեց ահ ու վախից։
Դաւիթ կանչեց.—Մի՛ վախենաք,
Ականջ արէք հալա դեռ ինձ։

Դուք ըռանչվար մարդիկ, ասաւ,
Ջուրկ ու խաւալ, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցաւ,
Հազար ու մի հոգսեր ունէք։

Ի՞նչ էք առել նեռ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.

Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացել էք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կեանքից,
Թէ՞ զբաղել էք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձէք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրայ.
Բայց թէ մին էլ զէնք ու զօռով
Վեր էք կացել դուք մեզ վրայ,

Հորում լինեն քառասուն գազ խոր
Թէ ջաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դէմ, ինչպէս այսօր,
Սասմայ Դաւիթ, Թուր-Կայծակին։

Էն ժամանակ Աստուած գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,
Թէ դուք, որ մեզ արիք դուշման...

1902

ՀՀ Ազգային գրադարան
NL0340279

ՀՐԱՏ. ԸՆԿԵՐ. „ՍՏ. L 32394

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ընդհանուր վերնագրի տակ հետագիտել լոյս տեսնելու առանձին գրքոյկներով մեր բանաստեղծների լաւագոյն ստեղծագործութիւնները։ Արդէն հրատարակուած են

1. Յովհան. Թումանեանի		Սասունցի Դաւիթը	15
2. »	»	Անուշ . .	15
3. »	»	Լեգենդներ . .	15
4. [redacted]	. .	[redacted] . .	15
5. »	. .	[redacted] .	15

Տպագրուում է

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

պատկերազարդ սերիան

1. Ղազ. Աղայեանի.		Գիւլնազ-տատի հէքիաթը, Այծատուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Խան
2. »	»	Անտառի մանուկը, Ասլան-Բալա, Եղեգնուհի
3. Ժողովրդական.		Ոսկի ձկնիկ
4. »		Գառնուկ-եղբայր, Աղուէսը, Գայլը, Արջն ու Զմռուխտ-դուշը.

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Товарищество „Ст. Лисиціанъ и К°“. (Бебутовская ул. 29) *և* Типографія „Гермесъ“ (Мадатовская ул. 15).